

Մինչդեռ Պետրոս Հոռմ հասած եւ պապին ներկայանալէ ետքը՝ եւրոպական թագաւորներու ալ զիմելու նպատակով ճամբայ ելած էր, հայ պատգամաւորութիւնն հասաւ զիմաւորեց զինքը Վենետիկ մէջ (1368 օգոստ. սեպտ.), առաջարկելով իրեն իր շատո՛նց երազած հայկական թագաւորութեան գահը (1)։ Ուստի Պետրոս աճապարեց դառնալ Կիպրոս, անկէ ալ Հայաստան անցնելու համար։

Նոյն տարւան սեպտեմբերի վերջին օրը Պետրոս մտաւ Կիպրոս։

Այնտեղ քիչ մը զաղար առնելէ եւ իր նոր գահին վերաբերեալ հարկ եղած կարգադրութիւններն ընելէ ետքը՝ հազիւ թէ պատրաստ էր մեկնելու, եւ ահա իր պալատականներէն մէկուն ձեռքով սպանուեցաւ Նիկոսիայի մէջ (1369 յունվ. 16). որով Պետրոս չկրցաւ հասնիլ իր փափագին(2)։

Այս լուրը շատ յուզեց եւ յուսահատեցուց Պետրոսի կուսակիցները։ Բայց քանի մը ամիս վերջը՝ սկսան նորէն շարժիլ եւ Տարսոնի եպիսկոպոսին առաջնորդութեամբ պատուիրակութիւն մը զրկեցին պապին (1369 յուլ. 1), օգնութիւն ուզելու համար Սարակինոսներու դէմ (3), որոնք Հալէբի կառավարիչ Կոչթիմուր-ի հրամանատարութեան տակ մայրաքաղաքին վրայ կրկին յարձակած եւ գրաւած էին զայն։

Գալով Մարիամի կուսակիցներուն, ասոնք ալ իրենց կարգին Ստի

(1) Այսպէս կրտէ Machaut, Խ. 222-223 .

Li roys se parti de la court;
Mais sa renommée qui court
Par tous pais, par tous chemins,
L'essaussa tant, que les Hermins
L'ont pour leur signeur eslieu,
Pris et nommé et receu; . . .

(2) Եւրոպացի պատմիչները կրտեն քէ Պետրոս քաղաւորած է Հայերուն եւ քէ մասնաւոր դրամ ալ սպիլ տուած, նետեցնելով Լանգլուայի մեկ նրասարակութեանէն։ Իրաւ է քէ Լանգլուա իր Հայ Դրամագիտութեան (*Numismatique de l'Arménie au moyen-âge*) մէջ Պետրոս քաղաւորին արծաթէ մեկ դրամը կը դնէ, նետեալ մակագրութեամբ — ՊԵՏՐՈՍ ԹԱԳԱՈՐ ԱՄԵՆԱՅԻ ՀԱՅՈՅ — ՇԻՆԵԱՒ, Ի ԳԱՂԱՔՆ Ի ՍԻՍ . — Բայց մինչեւ եիմա ծանօթ այս միակ դրամը կեղծ է, ինչպէս իրաւամբ կասկածած է նաեւ նշանաւոր հայ դրամագէտն Ն. Կղեմ. վ. Սիպիլեան։ Հմմտ. Դասաւորութիւն Ռուբիկեան դրամոց, Խ. 69-70։

(3) Jorga, *Philippe de Mézières*, Խ. 381, ծան. 1 .